



ՅՄԻՐԱԶ

Յ Ր Ա Ք Ե Ր Ք

LE NUMERO : 1 €

ՀԻՄՆԱԳԻՐ՝ ՇԱԻԱՐՇ ՄԻՍԱԿԻԱՆ (1884-1957)

78ՐԴ ՏԱՐԻ - ԹԻԻ 20-484

Fondateur SCHAVARCHE MISSAKIAN

ԱՏԱՆԱՅԷՆ ԼՈՆՏՈՆ ԱՆՇԻՐԻՄ 90-ԱՄԵԱՅ ՈՐԲԸ

ՀՐԱԶ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

«Հայերը զիս մուրացկան կը կոչեն,
սակայն ես նոյնիսկ աղբահաւաք
կ'ըլլամ Հայաստանին օգնելու համար»

Յաճախ կը փորձենք անդրադառնալ անցեալի իրադարձութիւններուն, մեր հաւաքական պատմութեան եւ փորձառութիւններուն եւ կը փորձենք իմաստ մը գտնել դէպքերու մէջ, որոնք շատ անգամներ մարդկային ըմբռնումէ ու իմաստէ անդին են, ինչպէս ահաոր Յաղասպանութիւնը: Բայց շատ անգամներ մեր աչքին առաջ եղած արժէքները չենք տեսներ: Լոնտոնաքնակ 90-ամեայ Ռոզա Խտրեանը նման ոսկի արժէք մըն էր: Անձ մը որ նոյնիսկ կեանքի ամենադաժան փորձարութեան մէջ ունէր գոյատեւելու եւ ծառայելու հաւատք, եռանդ: Անձնուէր մայրիկ մը որ Հայաստանի որբերուն համար, բարոսցիօրէն մուրացկանութեամբ մեծ գումարներ դրկած էր: Այս տողերը իր կեանքն ու յիշատակը չարգելու եւ իր օրինակը չմոռնաւելու ջանք մըն են:

Ռոզա Խտրեանը, որք մը, որ ամբողջ եկանքը ապրեցաւ «որբութեան» մէջ, իր մահկանացուն կնքեց Յուլիս 13ին, ու մնաց «որբ», անշիրիմ: Ռասըլ Կրիմի դիակիզարանը իր «պատմութեան» վերջակէտն էր: Ռոզան, (ինչպէս բոլորին ծանօթ էր իր առաջին անունով) իր մէջ կը խտացներ գաղթաշխարհի մեր պատմութիւնը, աւելին, ան նրբագոյն մարմնացումն էր ոգիի մը, որ թէ՛ զուտ հայկական էր եւ թէ՛ համառ մարդկային:

Ծնած էր 1912 թուականին՝ Ատանաի մէջ, ըլլալով հարուստ ընտանիքի մը զաւակը: Երեք տարեկանին որբացած էր, երբ իր ծնողները ջարդուած էին ցեղասպանութեան ընթացքին: Իր այրած եւ ձեւափոխուած աջ ձեռքը ցոյց տալով, Ռոզան կը բացատրէր. «Երեք տարեկանէս ի վեր Թուրքերը այս նշանը ինձի ձգեցին բոլոր կեանքիս ընթացքին: Թուրքերը կարծեր են, որ ես ալ կը մեռնիմ, բայց փառք Տիրոջ՝ որ միայն ձեռքս այրեր է»:

Ուրիշ որբերու հետ միասին, Ռոզա Ատանայի մէջ որբանոց մը կը դրկուի, Սկովտացի միսիոնարներու խնամքին տակ: 12 տարեկանին կ'անցնի ուրիշ որբանոց մը Լիբանանի մէջ: Հազիւ թէ կը յիշէ իր ծնողները: Սակայն կը յիշէ թէ որբանոցին մէջ մարդիկ զինք մատնանիշ կ'ընէին ըսելով. «Հարուստ Խաչիկին աղջիկն է»:

14 տարեկանին, բաժնուեով որբանոցէն, կ'անցնի Պաղեստինի Նազարէթ քաղաքը այնտեղ ուսանելու եւ պատրաստուելու համար որպէս բուժքոյր: Սակայն իր հիւանդութեան պատճառով, ան չի կրնար աւարտել պահանջուած դասընթացքները եւ իրեն կը թելադրուի, որ երախաներու հոգատար մը ըլլայ: Նախ ան որպէս հոգատար կը խնամէ Նազարէթի հիւանդանոցի աւագ բժիշկին զաւակը: Աւելի ուշ, ան

հոգ կը տանի Երուսաղէմի Լեֆ հիւպատոսին երախաներուն, եւ ապա երկար տարիներ կ'աշխատի որպէս հոգատար անգլիացի շարք մը ընտանիքներու մօտ:

Ընտանիքներու երկար ցանկին մէջ Ուիլսըն-ներն էին, անգլիացի լրագրողներ, որոնք որպէս թղթացիներ կ'աշխատէին Երուսաղէմի մէջ: Ռոզա կը խնամէ ու կը մեծցնէ անոնց երկու զաւակները: Այդ ընտանիքին հետ երկու տարի կ'ապրի Զայիր, Ափրիկէի մէջ, երբ 1957 թուի Սուրբ Ծննդեան տօնին օրը Տիկին Ուիլսըն կ'ըսէ. «Ռոզա, պատրաստուէ տուն պիտի երթանք», ու անոնց հետ մեկնելով Լոնտոն կը հաստատուի: Ռոզա անգլիական անցնագիր կը ստանայ 1964-ին:

Բայց եւ այնպէս, Ռոզայի յարաբերութիւնը Ուիլսըն ընտանիքին հետ վերջ չի գտներ երբ անոնց երախաները կը մեծնան ու այլեւս խնամքի պէտք չեն ունենար: 1966-ին Ռոզա երախաներուն մեծ մօրը տան հոգատար կ'ըլլայ եւ յաջորդ 21 տարիները կ'ապրի ընտանիքի մեծ մօր հետ, Լոնտոնի արուանձաններէն մէկուն մէջ:

Ուիլսըններու մեծ մօր մահէն ետք, 75 տարեկան հասակին, Ռոզան առաջին անգամ ըլլալով իր սեփական բնակարանը կ'ունենայ, Լոնտոնի ծերանոցի մը մէջ, փոքրիկ սենեակ մը որուն պատերուն վրայ կախուած էին լուսանկարներ, թերթիկներ եւ յիշատակելի այլ իրեղէններ: «Ասիկա իմ թանգարանս է», կը սիրէր ըսել Ռոզան իրեն այցելողներուն:

Ռոզայի ապրած փոքրիկ սենեակին մէջ կուտակուած էին բրդեղէն, հիւսուած քառակուսիներ եւ ծածկոցներ, բոլորն ալ պայծառ գոյներով, որովհետեւ «երախաները կը սիրեն պայծառ գոյները», կ'ըսէր ան:

1976ին Ռոզա կ'արձանագրուի որպէս կամաւոր Save the Children միջազգային կազմակերպութեան եւ կը շարունակէ օգնել անոնց իր աւելի քան 20 տարիներու նուիրեալ ծառայութեամբ, որուն համար ստացած էր բազմաթիւ գնահատական նամակներ եւ պատուոյ գիրեր: Հազարաւոր ձեռագործ ծածկոցներ գործած էր, ինչպէս նաեւ հիւսած բրդեղէններ, վզկապներ եւ գլխարկներ աշխարհի զանազան կողմերը ապրող կարիքաւոր երախաներուն համար: Իր աշխատանքին արդիւնքը, իր պատրաստածները մինչեւ իսկ Վիէթնամ հասած էին: Ան կը հաւաքէր նաեւ այլեւս մեծցած երախաներուն մաքուր հագուստները իր բարեկամներէն եւ դրամ ալ ապահովելով, կը դրկէր կարօտեալներուն:

Ժպիտով, կատակով եւ ներքին զօրութեամբ, ան կ'արդարացներ իր երկար տարիներու աշխատանքն ու նուիրեալ ծառայութիւնները ըսելով. «Եթէ զբաղուած

չես, ինքզինքիդ մասին կը խորհիս: Ատիկա ճիշդ չէ: Աստուած ինձի երկու ձեռք տուած է եւ ես տակաւին կ'աշխատիմ»:

1988-ի Հայաստանի երկրաշարժը Ռոզայի կեանքին գլխաւոր հանգրուաններէն մին էր: Ան կ'ըսէր. «Աստուած զիս առաջնորդեց, որ Հայաստանին օգնեմ: Օր մը երբ ես լաւ չէի զգար, Յիսուս ինձի յայտնուեցաւ եւ ըսաւ. «Ռոզա՛, ահաասիկ շիշ մը իդ քեզի համար եւ կեանքիդ մէջ դուն ուրիշ բանի պէտք չունիս»: Այդ օրէն սկսեալ, որոշեցի որ իմ բոլոր ունեցածներս պիտի դրկեմ Հայաստանի երախաներուն: Երկրաշարժէն ի վեր, Հայաստան օգնութիւն կը դրկեմ»:

Արդարեւ, անցնող 14 տարիներէ ի վեր, Հայաստանի երախաներուն մասին մտահոգութիւնը Ռոզային կեանքը եղած էր: Ամէն Կիրակի, Աշտարակ կարմիր-կապույտ-նարնջագոյն իր իսկ հիւսած բուրդէ գլխարկով, Սուրբ Սարգիս Հայոց Եկեղեցիին դրան առջեւ կենալով, ան կ'ողջունէր պաշտամունքի եկողները եւ փոքրիկ տուփը կ'երկարէր անոնց ազնուութեամբ խնդրելով. «Օգնեցէք Հայաստանի որբերունսիկա Հայաստանի երախաներուն համար է»: Ու Ռոզան, ցաւօք բայց անկուն կերպով կ'ըսէ. «Հայերը զիս մտրացկան կը կոչեն, սակայն ես Սրբազան Հօր ալ ըսի, որ ես նոյնիսկ աղբահաւաք կ'ըլլամ Հայաստանին օգնելու համար: Հոգ չեմ ըներ թէ Հայերը զիս ինչ կը կոչեն»:

Ծաթթուան ընթացքին Ռոզան Մք Տոնալտ եւ այլ ճաշարաններու առջեւ ալ դրամ կը հաւաքէր Հայաստանի երախաներուն համար: Ամսուն վերջը, իր հաւաքած գումարին կրկնապատիկը կ'աւելցնէր ստացած սահմանափակ թոշակէն եւ դրամը կը դրկէր հայրենիք՝ Անգլիոյ Հայաստան Հիմնադրամին միջոցաւ: Ան վստահութեամբ կ'ըսէր. «Ես դրամի մասին չեմ մտահոգուիր, ես մէկ ոսկիով իսկ կ'ապրիմ: Աստուած կը դրկէ: Անոր համար ես բնաւ հոգ չեմ ըներ»:

Մինչեւ վերջերս ցեղասպանութենէն վերապրող 90-ամեայ այս հայուհին, թէեւ մարմնով տկար, սակայն յարատեւող այս մայրիկը, աւելի քան 50.000 տոլար դրկած է Հայաստանի երախաներուն եւ կարօտեալներուն ի նպաստ: Ան առանց զիջումի կը հաւաքէր նպաստներ, բառացիօրէն կաթիլ առ կաթիլ, փոքրիկ գումարները խնայելով, ազնուաբար մտրալով եւ իր ամբողջ ունեցածը տալով Հայաստանին:

1992-ին Ռոզա այցելեց Հայաստան, մասնակցելու համար Վանաձորի (Կիրովական) մէջ հիւանդանոցի մը բացումին, որուն համար ինք դրամ հաւաքած էր: Հիւանդանոցին մէջ սենեակ մը իր

անունով կոչուեցաւ: Հանդիսութեան ընթացքին Ռոզա ընկոյզի ծառ մը տնկեց հիւանդանոցի պարդէզին մէջ: Ան կը բացատրէր ըսելով. «Երբ որ իմ անունս կրող սենեակին պատուհանէն դուրս նայիս, պիտի տեսնես այն ծառը որ ես տնկեցի: Ես ուզեցի ծառ մը տնկել որպէսզի ան շուք տայ եւ հաճելի տեսարան մը հիւանդներուն»:

Ու կը շարունակէր. «Որքան որ ես կուտամ, Աստուած անկէ աւելի ինծի կուտայ, որպէսզի ես օգնեմ: Աստուծոյ փառք կուտամ, որ ես Հայաստան օգնութիւն կրնամ դրկել եւ պիտի դրկեմ մինչեւ այն ատեն որ անոնք կարիքը ունին: Հայաստանի եւ յատկապէս Հայաստանի երախտներուն համար աշխատիլը ինծի համար առանձնաշնորհում մըն է»:

1996-ին Ռոզային տրուեցաւ Հայաստանի անցագիր մը, կառավարութեան մասնաւոր հրաւ մանագրով, որով Հայաստանի քաղաքացիութիւն շնորհուեցաւ ցեղասպանութենէն վերապրողներուն: Սա իր կեանքին ամենէն նշանակալից դէպքն է: «Հայաստանի քաղաքացի ըլլալէս ի վեր, ես տարբեր կը զգամ. ես չաբազանց ուրախ եմ: Մինչեւ Հայաստանի անցագիր ստանալս, ամբողջ կեանքս կ'ապրէի օտարներու հետ, ինքզինքս զուտ հայ չէի զգար: Ես ամբողջութեամբ հայ չէի, որովհետեւ հայկական անցագիր չունէի: Միայն անունով Հայ էի, որովհետեւ շատ մը օտարներ չէին ճանչնար թէ Հայը ո՞վ է, կամ ի՞նչ է: Այնպէս կը զգամ, թէ կարծէք վանդակէն դուրս կուգամ եւ ազատ եմ, ազատ թռչելու: Հիմա գիտեմ թէ ես իսկական Հայ եմ: Հայկական անցագիր ունենալը կեանքիս ամենէն կարեւոր բանն է, որովհետեւ ես ինքզինքս մինակ կը զգայի տարբեր ազգութուններու միջեւ բնակելով, իսկ այժմ ես իմ ազգիս պատկանելիութեան զգացումը ունիմ: Ամբողջ կեանքիս ընթացքին ես անգլերէն խօսած եմ, որբանոցի օրերէն մինչեւ հիմա, սակայն ես չեմ մոռցած իմ մայրենի լեզուս»:

Հայաստանի նկատմամբ Ռոզային ունեցած սէրն ու մտահոգութիւնը անսակարկելի էր: Ան վստահ էր, ինչպէս կ'ըսէր, որ «Հայաստան շատ լաւ պիտի ըլլայ ապագային», սակայն կը զգուշացներ. «Հայաստանի նախագահը շատ ուշադիր պէտք է ըլլայ, որ Հայերը իրենց տունները չծախեն Թուրքերուն կամ օտարներուն: Ան մասնաւոր յայտարարութիւն մը պէտք է հանէ, որ Հայերը չծախեն իրենց տունները: Մենք հոս շատ կ'աշխատինք իրենց օգնելու համար, որպէսզի հայ որբերը ուտելիքով կշտանան եւ մեծնան ու լաւ մարդիկ դառնան»:

Բացի Հայաստանէն, Ռոզա կը շարունակէր

օգնել իր շարջանի կրօնեալներուն: Երբ ես իրեն աչքելեցի, տակաւին նոր տարած էր 16 հատ ձեռագործ ծածկոցներ Լոնտոնի երախտներու հիւանդանոցին: Ու Ռոզան բացատրեց. «Ես ծածկոցներ հիստեցի, որպէսզի երախտները կարենան իրենց ծունկերը ծածկել երբ անոնք սալակներու մէջ են: Անոնք երախտաւարտ են ինչ որ կարենանք ընել իրենց համար եւ պէտք չունին գիտնալու, թէ ո՞վ կը նուիրէ եւ կամ կ'օգնէ իրենց, կարեւորը այն է, որ անոնք օգնութիւն կը ստանան»:

Ռոզա Խտրեանի մէջ կարելի էր տեսնել Հայաստանի անցեալն ու ներկան: Միայնակ եւ որբ, Ռոզայի կեանքը իր կատարելութեան հասաւ Հայաստանի Հանրապետութեան անկախացումով: Անոր անձնական տառապանքը, պայքարն էր ցեղասպանութենէն բոլոր վերապրողներուն եւ իսկականին մէջ, հայ ազգի անցնող ինը տասնամեակներու փորձառութիւնը:

Մեր ազգին Ռոզա Խտրեանները, իրենց զօրաւոր կամքով, յարատեւութեամբ եւ քաջութեամբ, պահպանած են մեր ցիրոցան ժողովուրդը բոլոր դժուարութիւններուն դէմ: Անոնք ապրող սուրբեր են եւ մարմնացումն են մեր ազգային արժէքներուն. անոնք շօշափելի փաստն են, որ ազգ մը որ բոլորովին իր գոյութիւնը կորսնցնելու վրայ էր, տակաւին ինքզինք կրնայ նուիրել ամբողջ մարդկութեան:

Ինչպէս Ռոզա պիտի ըսէր. «Աշխարհի մէջ մարդիկ գութ ունին, անոնք հոգ տանելու խիղճ ունին եւ մենք պէտք է փառք տանք ատոր համար: Կեանքիդ ընթացքին պէտք է օգտակար հանդիսանաս մարդոց: Սա է իմ տեսակէտս»: Իրօք Ռոզայի «տեսակէտը» դիպուկ պատգամ է բոլորիս:

Հ. Չ.

Լոնտոն